# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

05.10.2024



Այսօր մեր երկրում ամենասիրված տոներից մեկն է:

Ուսուցիչն է, որ բոլոր ժամանակներում համարվում է մշակույթի ու գիտելիքի կրողը. սակայն աշակերտներն ու նաև ավագ մարդիկ ձեզ մոտ են գալիս ոչ միայն գիտելիքների, այլև օգնության և խորհուրդների համար: Եվ հենց այն ուսուցիչներին են երախտապարտ աշակերտները հիշում ողջ կյանքում, որոնց դերակատարումը բեկումնային է եղել հետագա ճանապարհի ընտրության կամ որպես անհատ ձևավորվելու գործում:
Սիրելի՛ ուսուցիչներ, այս օրը հրաշալի առիթ է ևս մեկ անգամ երախտագիտություն հայտնելու բոլորիդ՝ ձեր վեհ, պատվաբեր, ստեղծագործ, միևնույն ժամանակ բարդ ու պատասխանատու աշխատանքի, նվիրվածության համար, այն ջերմության համար, որը ամեն օր տալիս եք երեխաներին:
Շնորհակալություն հատկապես այն մանկավարժներին, որոնք անգնահատելի ներդրում ունեն մեր մարզի կրթական համակարգի զարգացման գործում:
Սրտանց շնորհավորում եմ բոլորիդ մասնագիտական տոնի կապակցությամբ, մաղթում բարեկեցություն, քաջառողջություն, ընտանեկան երջանկություն և նորանոր մասնագիտական հաջողություններ:
Նոր կրթական չափորոշիչներին, ծրագրերում ու դասագրքերում մշտապես կատարվող փոփոխություններին համահունչ քայլելն, իհարկե, բարդ է, բայց տեսնում ենք, որ կարողանում եք արագ հաղթահարել խնդիրները, լուծումներ գտնել, կիրառել աշխատանքի արդիական մեթոդները և իրականացնել խոստումնալից կրթական, գիտական, մշակութային նախագծեր: Այս ամենի արդյունքում արդիականացվում է մեր հայրենական կրթությունը:
Բայց ոչ մի գերժամանակակից տեխնոլոգիա կամ նորարարություն չի կարող փոխարինել մանկավարժական տաղանդին, հմտությանը և մասնագիտական բարձր պատրաստականությանը: Ու համընդհանուր աշխատանքի բարձր արդյունավետության հենքն, իհարկե, ձեր արհեստավարժությունն է ու նվիրումը:
Ձեր շնորհիվ, սիրելի՛ ուսուցիչներ, ակտիվ, ստեղծագործ երեխաների հրաշալի սերունդ է մեծանում: Նրանց հաջողությունները օլիմպիադաներում և տարբեր մրցույթներում ձեր վաստակն են և ներդրումը Սյունիքի ու Հայաստանի Հանրապետության ապագայում:
Թո՛ղ աշխատանքային ամեն օրը ձեզ ոգեշնչում և լավ տրամադրություն բերի, իսկ սերը երեխաների հանդեպ, մասնագիտական նոր բարձունքներ նվաճելու ցանկությունը երբեք չլքեն ձեզ: